# ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

---

## ԻՇԽԱՆՈՒՀԻ

*Դրամա չորս գործողութեամբ, հեղինակութիւն Շիրուանզադէի։*

Ամսիս 12 ին հայ թատրոնական կանոնաւոր խումբը ներկայացրեց պ. Շիրուանզադէի «Իշխանուհի» դրաման։ Միանգամայն բնական է այն հետաքրքրութիւնը որ կապուած է ինքնուրոյն պիեսների առաջին ներկայացման հետ. և հասարակութիւնը, լցնելով թատրոնը, առատօրէն տուց այն հարկը, որ նա պարտական է զգում ամեն մի չատ թէ քիչ աչքի ընկնող հեղինակի նոր ստեղծագործութեանը։

Ճիշդ սահմաններից չանցնելու համար հարկաւոր է ասել որ «Իշխանուհու» համար այն մեծ հետաքրքրութիւնը չը կար, ինչ որ երկու տարի առաջ ես վկայել էի պ. Սունդուկեանի «Ամուսիններին» համար։ Վերջինիս համար ցանկութիւնը ներկայացմանը ներկայ գտնուելու՝ բուռն էր և անհամապատասխան թատրոնի դահլիճի մեծութեանը. «Իշխանուհու» համար հետաքրքրութիւնը ճիշդ այնքան էր, որքան բաւական էր մի „première“ յարգանքով ողջունելու համար։

Պր. Շիրուանզադէ մինչ այժմ յայտնի էր որպէս հայկական հասարակական ռոմանի ներկայացուցիչներից մէկը։ Իշխանուհի դրամայով նա ոտ է կոխում դրամատիկական ասպարէզը։ Կարելի է ուրեմն եզրակացնել թէ ինչը առանձնապէս կարող էր դրաւել հայ գրական հասարակութիւնը դէպի թատրոնը «Իշխանուհին» տեսնելու համար։ Ոչ թէ այն թէ ինչպէս պէտք է լուծուի այս կամ այն խնդիրը, այլ այն թէ ինչ յոյժողութիւն կարող է ունենալ պ. Շիրուանզադէ որպէս դրամատուրգ,—ահա թէ ինչն էր գրաղեցնում գրական դասակարգը։ Սունդուկեանցի «Ամուսիններ» դրամայում հասարակութիւնը ամենից առաջ հետաքրքիր էր տեսնել հեղինակի դիրքը դէպի ամուսնական խնդիրները, պ. Շիրուանզադէի «Իշ-

իսանուհի» դրամայում հառարակութիւնը հետաքրքիր էր ծանօթանալ հեղինակի ընդունակութեան հետ դրամատուրգի առպարէզում։

Գործը սակայն շատ պակասաւոր էր, այնքան պակասաւոր, որ ես իմ միտքը պարզ լայնած չեմ լինիլ, ասելով միայն թէ նա «թոյլ էր»։ Ոչ միայն Իշխանուհին թոյլ գրուածք էր, այլ նորա առիթով կարող է հարց դնուել թէ ինչպէս պ. Շիրանզադէի մէջ կարող էր միտք լղանալ՝ այդպիսի մի գրուածք թատրոնական կոմիտեային յանձնելու։

Մի գրուածք, մանաւանդ թատրոնական գրուածք միայն այն ժամանակ արժէ քննադատել ըստ բովանդակութեան և գաղափարի, երբ մարդ սոսկալուած չի լինում չարունակ և անընդհատաբար տեսնել տեխնիկայի անասելի բացակայութիւնը։

Շիրանզադէն Իշխանուհու մէջ ամենից առաջ զարմացնում է հանդիսատէսին հոգեբանական կեանքի աղքատութիւնով։ Մենք տեսնում ենք Իշխանուհու մէջ որոշ անձնաւորութիւններ, թողնենք առայժմ թէ նոքա որքան տիպիկական են այն շրջանների համար, որոնց ներկայացուցիչներն են կամ գոնէ պէտք է լինին նոքա։ Բայց մենք չենք տեսնում այն կեանքը, որ պէտք է ստեղծեն այդ որոշ անձնաւորութիւնները բեմի վերայ։ Այդ կեանքը կարելի է ստեղծել միմիայն նրանով, որ բեմի վերայ երևան գան նոր յարաբերութիւններ և ներկայացնեն այն տեսարանները, որոնք բղխում են այդ նոր զարգացող յարաբերութիւններից։ Բայց մենք ինչ ենք տեսնում պ. Շիրանզադէի «Իշխանուհու» մէջ։ Այն, որ այդտեղ գրեթէ բոլորովին չեն զարդանում նոր յարաբերութիւններ, չը կայ ոչ մի յարաբերութեան զարգացումն։ Ամեն ինչ սրուած է հէնց սկզբից։ Աչքի անցնենք մի քանի իրողութիւններ այդ պարզելու համար։

Պիեսի մէջ դեր է խաղում հասարակ ծագումից բայց հարստացած ընտանիքից կրթուած և սիրող սիրտ ունեցող երիտասարդ Իշխանուհի Հեղինէն։ Նա հէնց սկզբից դուրս է բերուած դժբաղդ՝ իւր ամուսին Իշխան Միքայէլ Բէգմուրեանի անհաւատարմութեան պատճառով։ Նորա տժբաղդութեան աստիճանը առաջին և չորրորդ ու վերջին գործողութեան մէջ շատ չնչին չափով է տարբերուում։

Պիեսի մէջ մեծ դեր է կատարում Իշխանուհի Հեղինէի խոշոր օժիտը և նորա սպառելը Իշխան Միքայէլի (Հեղինէի մարդու) չաստութիւնների պատճառով. այդ դերը կալանում է նրանում, որ օժիտի դոյութիւնը դեռ մի որոշ չափով սանձահարած է պահում Իշխան Միքայէլին։ Բայց պ. Շիրանզադէն մեզ ներկայացնում է հէնց գործողութեան սկզբում այդ օժիտը դրեթէ սպառուած-վերջացած, այնպէս որ առաջին և չորրորդ գործողութիւնների ընթացքում միայն մի անգամ Իշխան Միքայէլը օգուտում է կնոջ փողերից՝ օժիտը մինչ վերջին կոպէկը սպառելու համար։

Իշխան Միքայէլը, Հեղինէի մարդը, դուրս է բերուած իբր իրան չաստութիւնների անձնատուր արած մի մարդ, որը իւր կնոջ վերայ նա-

լում է միայն որպէս փողի տոպրակի վերայ։ Ուրեմն նորա ամբողջ կեանքը դրսումն է. արդ այդ դրսի կեանքի մասին մենք տեղեկանում ենք միայն մի քանի խոսքերից և ինչ որ մի անստորագիր նամակից, որ կարդում է Հեղինէն բեմի վերայ։ Ուրեմն ինչ է չինում իշխան Միքայէլը բեմի վերայ չորս երկար ու ձիգ գործողութիւններում? Նա հէնց շարունակ կրկնում է իւր անփողութեան մասին և այն որ իւր կնոջը չի սիրում, բայց որ իւր այդ կնոջը պէտք է չոյէ քանի որ օժիտը դեռ բոլորովին չի վերջացել։ Այդ խոսքերից դուրս, որոնք տաղտկալի և հոգեսպան միաձեւութեամբ կրկնւում են ամեն անգամ, երբ Միքայէլը բեմի վերայ է, հաղիւ հաղ Միքայէլը մի մի խոսակցութիւն է ունենում իւր կնոջ Հեղինէի եղբայր բարձրագոյն ուսումը նոր աւարտած Գարեգնի հետ, ուր այդ երիտասարդը փորձում է պաշտպանել իւր քրոջը։

Որ և է փոփոխութիւն Միքայէլի և Հեղինէի յարաբերութիւնների մէջ ամբողջ երեք գործողութիւններում չը կայ բնաւին, աւելցրէք որ երկուսի էլ արտասանած խոսքերը տաղտկալի միաձեւութեամբ կրկնւում են մինչ երրորդ գործողութեան վերջը։ Միակ խոշոր փոփոխութիւնը կատարւում է, երբ Միքայէլը, երրորդ գործողութեան վերջում, իրանից արդէն հեռացած կնոջը սկսում է մեղադրել (ղրպարտել) անհաւատարմութեան մէջ, իբր թէ յարաբերութիւն ունի Սուլիկեանի հետ։

Այդ Սուլիկեանը, որ իսկապէս սիրում է իշխանուհի Հեղինէին, առանց փոխադարձութիւն ստանալու վերջինիս կողմից, դուրս է բերւած շատ խոշոր կերպով, գործողութիւնների աղքատութեան պատճառով, բայց դոնէ Սուլիկեանը մի տեղ դեր է կատարում։ Պարերեկոյթում նա կատարում է տանտիրոջ դեր և իշխանուհի Հեղինէին օգնողի դեր, որով վատ կարծիք է կազմւում Հեղինէի հաւատարմութեան մասին։ Այդ բանը մէկն է այն քիչ բաներից, որ նոր է զարգանում պիեսի մէջ, հակառակ դրեթէ բոլոր միւս յարաբերութիւններին, որոնք հէնց սկզբից տրւած են ներկայացրւած։

Իշխանուհի Հեղինէի եղբայր Գարեգին, մի կողմ թողնելով նորա արտասանած ֆրազները արիստոկրատների դէմ, ամենաչատը ինչ կարողանում է առաջացնել, այն է, որ նրան յաջողում է համոզցնել իւր քրոջը բաժանել իւր մարդուց՝ երրորդ գործողութեան վերջում։ Հեղինէին իրաք հեռացնում է մարդուց։ Նրեք ամբողջ գործողութիւններում նա միայն այդ դերն է կատարում—միշտ կրկնելով միենոյնը, չասելով միաժամանակ շատ ուրիշ խոսքեր, առանց նոցա իրագործելու։ Որով դուրս է դալիս մեծ ֆրազեոր։

Պիեսի մէջ դուրս են բերւած՝ իշխան Միքայէլի մայրը—որի միակ դերը՝ Հեղինէին արհամարհական խոսքեր չպրտելն է, առանց գործողութիւն յառաջացնելու, Միքայէլի քոյրը՝ Օլգա, որի միակ դերը Հեղինէին ղրպարտելն է. Հեղինէի մայրը, որը միայն հառաչում է և լալիս. Հեղինէի մօր հեռաւոր ազգականը Զարբաբով—որը հարստահարում է Հեղինէի

դժբախտութիւնը, առանց մի որ և է նոր դրութիւն ստեղծելու։ Իբրև տիպ—Զարբաբեանը ամենալաջողուածն է, բայց նա պիեսի մէջ աւելորդ մարդու դեր է կատարում միայն։

Ժամանակակից կրթուած երիտասարդի տիպ է դուրս բերուած յանձին Հեղինէի եղբոր Գարեգինի։ Ես այս բոպէին քննում եմ խնդիրը միայն բեմական տեսակէտից և ոչ ըստ Լութեան և դտնում եմ որ նաև Գարեգինը միայն չորրորդ գործողութեան մէջ կարոնում է մի երկու գործողութիւնների տեղի տալ։ Գարեգինի բռնած դիրքի շնորհիւ դէպի խնդիրը, չորրորդ գործողութեան մէջ հանդէս են գալիս Մի քալէլի ծառան, Մի-քալէլի կաթն եղբայրը, մայրը և ապա նաև Միքալէլը ինքը. բայց նորա գլխաւոր ծառայութիւնը կայանում է նորա մէջ, որ Հեղինէին հեռացնել է տալիս իշխ. Միքալէլից։ Բոլոր գործող անձերի մէջ ուրեմն Գարեգինը նա է, որը բեմական ամենաշատ ծառայութիւնն է մատուցանում հեղինակին. և, չը նայած դորան, նա էլ տժգոյն է դուրս բերուած։

Ամփոփելով ասածներս «Իշխանուհու» իբր բեմական գրուածքի մասին, ես կրկնում եմ, որ նա աւելի քան անաջող է, չը կայ յարաբերութիւնների աստիճանական զարդացում, չը կան ուրեմն և այն անհրաժեշտ գործողութիւնները, որոնք պէտք է հանդիսականների առաջ պատկերացնէին գործող անձերի աստիճանարար զարդացող յարաբերութիւնները։ Եւ բոլորովին բնական է, որ «Իշխանուհին» չունեցաւ յաջողութիւն։ Իբր բեմական գրուածք, «Իշխանուհին» ոչ միայն ստոր է այս երեք տարիներում բեմ դրած պ. Սունդուկեանցի «Ամուսիններ» և պ. Գէորգ Զմշկեանի «Վարժուհի» նոր պիեսներից, այլ և այդ կողմից համեմատութիւն անգամ անել կարելի չէ դոցա հետ։ «Իշխանուհու» բեմական թերութիւնները այնպէս վիրաւորում էին հանդիսատեսի աչքը, որ չափազանցութիւն չը պէտք է համարուի եթէ ասեմ որ մեծ համբերութիւն էր պահանջւում սառնասրտութեամբ նայելու համար։

---

Այժմ անցնենք «Իշխանուհու» քննութեանը ոչ որպէս զուտ բեմական գրուածքի, այլ առհասարակ որպէս դրամատիքական գրուածքի։ Կան դրամատիքական գրուածքներ, որոնք բեմական արժանաւորութիւններ չունին, բայց ունին դրական մեծ նշանակութիւն, շնորհիւ հոգեբանական ճիշդ անալիզների և դուրս բերուած կատարեալ տիպերի։ Դուրս բերուած տիպերի քննութիւնից «Իշխանուհու» առիթով ես պէտք է հրաժարուեմ, որովհետև այդպիսի մի քննութիւն ես աւելի պատշաճ եմ համարում կատարել յատ թէ քիչ կրիտիկա վերցնող գրուածքի առիթով։ Ես կանդ կ'առնեմ ուրեմն գրուածքի հոգեբանական կողմի վերայ։ Անկախ տիպերի ճշդութիւնից մի դրամատիքական գրուածքից ամենից առաջ պահանջւում է հոգերանական ճշդութիւն։ Բեմական թերութիւնները նե-

բելի են նոր սկսող դրամատուրգին, որովհետև դա տեխնիկական կատարելագործութեան գործ է, որը ժամանակով կարող է ձեռք բերուել։ Հնչտութեամբ կարելի է բեմական տեսակէտից թերի մի գրուածք աւելի բեմական դարձնել, այս կամ այն տեսարանը աւելցնելով կամ աւելորդը դուրս դցելով. մինչև անգամ եթէ տիպերն էլ թոյլ են՝ կարելի է նոցա զօրեղացնել։ Բայց մի գրուածք չի կարող նոր մշակումով ուղղուել, որը նորա հիմքում դրած հոգեբանական խնդիրը հիմնովին սխալ է։ Եթէ «Ինչխանումը» միջից հանենք այն բոլորը, ինչ կատարւում է լանուն Հեղինէի տածած սիրոյն դէպի Միքայէլը, էլ նորա մէջ ոչինչ չի մնալ։ Ուրեմն պէտք է, որ Հեղինէի այդ ուէրը հասկանալի լինի, որպէս զի դրուածքը հոգեբանական և գրական արժէք ունենայ։ Քննենք ուրեմն այդ խնդիրը, պատմելով նախ պիեսի բովանդակութիւնը։

Երկուս ու կէս տարի է որ հասարակ մի ընտանիքի և հարստացած ու շատ վատ անուն թողած մի կալատոպի աղջիկ, միջակ ուսում ստացած և հարուստ օժիտ բերած Հեղինէին իշխան Միքայէլ Բէգմուրեանի կինն է։ Հեղինէն շատ դժբախտ է. նորան չեն լարդում իւր մարդու տանը. սկեսուրը շարունակ նախատում է Հեղինէին և շարունակ էլ վերնից նայում նորա վերայ՝ իբր բարերարուածի վերայ, որը հասարակ տանից մի իշխան նական տուն է եկել։ Ինչու է այդքան նախատում—չի հասկացուում պիեսից. լայտնի է միայն որ Հեղինէն հարուստ էր, իսկ Բէգմուրեանները աղքատ, այնպէս որ այդ իշխանական տունը միայն Հեղինէի փողերով է ապրում։ Այդ հանգամանքներում պէտք էր կարծել որ եթէ սկեսուրը չէր սիրում Հեղինէին, դոնէ չը պէտք է այդքան թշնամանար նորա հետ, քանի որ Հեղինէն էլ ոչ մի առիթ չէր տալիս այդպիսի տժգոհութիւնների, նա, որ իւր փողը չէր խնայում ընտանիքի համար և որը շատ սիրում էր Միքայէլին։

Բայց Հեղինէն տժբախտ է գլխաւորապէս նորա համար, որ իւր մարդը, Միքայէլը, իրան չի սիրում. նա շարունակ ուրիշ տեղերում է անցկացնում ժամանակը, շատ անգամ նոյն իսկ գիշերները դուրսն է անցկացնում։ Զը նայելով դորան, Միքայէլը, որը ինքը մի կոպէկ փող չունի և ոչ էլ որ և է պարապմունք ունի, շարունակ խաբում է կնոջը, որպէս զի սորանից միշտ փող դուրս կորզի։ Միքայէլը անգործ է, թուղթ խաղացող և անառակ կանանց հետ։ Չի երևում թէ որ և իցէ արժանաւորութեան տէր լինի. ուրեմն ինչու է նորան այնքան սիրում Հեղինէն։ Պիեսից երևում է որ դորա պատճառը միմիայն այն է, որ Հեղինէն հաւ կին է. ուրիշ որ և է պատճառ չի բերուում։ Բայց այդ մասին դեռ խօսք կը լինի ներքև, ուստի շարունակենք պատմութիւնը։

Բէգմուրեանների տունը յաճախում է Միքայէլի ընկեր և հասակակից Սուլիկանը, որը սկզբում ընդունուում էր իբր փեսացու Միքայէլի քոյր Օլգայի համար։ Բայց Սուլիկանը ատում է Օլգային և սիրահարուած է իւր ընկեր Միքայէլի կնոջ դժբախտ Հեղինէի վերայ։ Հեղինէն այդ նա-

խաղդում է, բայց աշխատում է Սուլիկեանին տեղիք չը տալ փսխաղարձութեան վերայ լուսեր գնելու. ուստի միշտ խուսափում է նորա հետ միայնակ մնալուց ամեն անգամ, երբ Սուլիկեանը Բէգմուրեանների տունն է գալիս։ Սուլիկեանը սակայն վերջապէս լարմար առիթ է գտնում իւր սէրը խոստովանելու։ Երրորդ դործողութեան մէջ, ուր ներկայացնում է մի պարերեկոյթ Բէգմուրեանների տանը, Միքայէլը գրաղած լինելով թխտախաղով, խնդրում է իւր ընկեր Սուլիկեանին տան տիրոջ տուը բռնել հիւրերի մօտ և Հեղինէի հետ լինել. չար դիտաւորութեամբ արդեօք որ հիւրերը տեսնեն Սուլիկեանի ухаживаніе-ն Հեղինէի հետ, այդ չի պարզւում. միայն թէ Սուլիկեանը այդ հանդամանքից օդտւում է իւր սէրը յայտնելու Հեղինէին։ Հեղինէն պատասխանում է մերժումով, թոյլ տալով որ Սուլիկեանը չարունակի իրանց տունը յաճախել որպէս բարեկամ։

Այդ բացատրութիւնները գաղտնի կերպով, դուռան յետևից թաք կացած, լսում է օրիորդ Օլգան։ Եթէ Օլգան լաւ լսած լինէր, պէտք է իմանար, որ Հեղինէն մերժել է Սուլիկեանին. բայց պ. Շերբանդաղէն ուղեցել է որ Օլգան այն խօսակցութիւնը լաւ չը լինէր լսած։ Եւ ահա Օլգան սկսում է տարածել թէ իբր ինքը վկայ է Հեղինէի անհաւատարմութեան։ Ուրեմն թիւրիմացութիւն։

Այդ անդքերից առաջ (երկրորդ դործողութիւնից), համալսարանը նոր աւարտած հասնում է Թիֆլիս Հեղինէի բժիշկ եղբայր Գարեգինը, որը տեղեկանալով հանդամանքներին, սկսում է համոդել իւր քոյր Հեղինէին՝ բաժանուել իւր մարդուց։ Հեղինէն, սակայն, ուզում է հաւատարիմ մնալ հայ կնոջ սկզբունքին՝ չը բաժանուել իւր մարդուց, բայց երբ քաղաքում սկսում են դրպարտել նորան և իւր մարդը, լսելով Օլդայի վկայութեան վերայ, մեղադրում է նորան անհաւատարմութեան մէջ, այն ժամանակ միայն Հեղինէն համաձայնւում է հօրէնց տունը քաշուել վերցնելով իւր հետ իւր փոքրիկ երեխային։

Բայց երեխային պահանջում է հայրը, Միքայէլը. Երեխի հայրը, մի քանի անաջող փորձերից յետոյ, ինքն է գալիս Հեղինէի հօրէնց տունը երեխային տանելու. այդ տանը հանդիպում է Սուլիկեանին, որը եկել էր ներողութիւն խնդրելու Հեղինէից։ Հեղինէն երեխին յանձնում է, բայց ինքն էլ թոյն է ընդունում և մեռնում։ Միքայէլը այդաւդ դդջում է։

Ես բոլորովին չը հասկացայ թէ ինչու Հեղինէն իրան սպանեց. իւր հօրէնց տանը՝ իւր և իւր եղբօր կողմից նա սիրուած է, պաշտպանուած, լարգւած և իբր լաւ կին է ճանաչուած. միւս կողմից Սուլիկեանը եկել էր ներողութիւն խնդրելու իւր ունեցած գայթակղեցուցիչ դիտաւորութիւնների համար։ Հեղինէի պատիւը ուրեմն աղատուած է և պաշտպանուած։ Մի կնոջ համար իւր տանը գտած այդպիսի պաշտպանութիւնը այնքան թանկագին է, որ դա մեծ մխիթարութիւն պիտի համարէր ժա-

մանակաւորապէս զրպարտուած մի կնոջ համար։ Մնում է կար և թէ մրակ պատճառը Հեղինէի ինքնասպանութեան՝ իւր երեխից բաժանուելն էր։ Ինքնասպանութեան համար, սակայն, դա թոյլ պատճառ է. այնպէս որ հեղինակը կարծես թոյն է ընդունել տալիս Հեղինէին՝ միմիայն դրամային մի կերպ վերջ տալու համար։

Մի տեղ հեղինակը ցոյց է տալիս Հեղինէին իւր հայ կնոջ սիզբունքին հաւատարիմ մի կին, որը չի ուզում հեռանալ իւր մարդուց ամենածայրահեղ դէպքերում անգամ. բայց միւս կողմից մենք տեսնում ենք նոյն այդ Հեղինէն թոյն է ընդունում, այսինքն՝ այն է անում, ինչ հին հաւատով հայ կինը չէր անիլ, կամ գոնէ այդպէս վարուելը յատուկ չէ նորա աշխարհայեցողութեանը։ Ինչպէս հաշտեցնենք այդ հակասութիւնները։ Գուցէ առարկեն ինձ, թէ ինքնասպանութեան դէպքեր մեզանում էլ են պատահում դժբախտ ամուսինների կողմից։ Ընդունում եմ. բայց այն ժամանակ Հեղինէի այդքան մեծ հաւատարմութիւնը իւր անառակ և փչացած, խաբեբայ և չնչին մարդուն միք գալ ու բացատրել լոկ նրանով, որ նա հայ կին է, որը գոհ է իւր առաքինութեան, ինչպէս մեծ պաթոսով այդ յայտարարում է Հեղինէի եղբայր քժիկ Գարեգինը։ Մթթէ մի կին, որին ամենածայրահեղ հանգամանքներն անգամ հարիւ կարողանում են համոզել որ բաժանուի իւր մարդուց, մի այդպիսի կին այդքան հեշտութեամբ վերջ կը տայ իւր կեանքին։

Բոլորովին անհասկանալի մի տիպ է Հեղինէն. մարդ չի կարողանում հասկանալ նորա սէրը դէպի իւր ըստ ամենայնի չնչին մարդը, Միքայէլը։ Որովհետև այդ իշխան Միքայէլը ոչ միայն անառակ է և վատ, այլ և չնչին, այդ խօսքի բուն նշանակութեամբ. այսինքն իւր բնաւորութեան մէջ դրականապէս չը կայ մի հատիկ գնահատելի գիծ, որ և է հրապուրիչ յատկութիւն, որի համար մի կին կարողանար սիրել նորան։ Եւ ես կարծում եմ որ «Իշխանուհին», ոչ միայն որպէս դրամատիքական պիես, այլ առհասարակ որպէս դրուածք, դուրս է եկել շատ անաջող հէնց դլխաւորապէս այն պատճառով, որ այն սէրը, որը լարող ուժն է բոլոր դործողութիւնների, պատճառը ամբողջ դրամայի, այդ սէրը, ասում եմ ես, չի ըմբռնուած հեղինակի կողմից։

Ես գիտեմ, որ ինձ կ'առարկեն թէ սէրը անհաչիւ բան է և չի կարելի ասել թէ ինչու էր Հեղինէն սիրում Միքայէլին, այլ իբր թէ փաստ է որ Հեղինէն սիրում էր Միքայէլին, թէկուզ սա լինէր աշխարհքիս ամենաչնչին արարածը։ Ես հասկանում եմ այդ առարկութիւնը, բայց այն ժամանակ դուք պէտք է դուրս դցէք դրամայից այն բոլորը, ինչ հասարակական բնաւորութիւն է կրում։ Այն ժամանակ դուք միք պահանջիք հասարակութեան կողմից հակակրութեան զդացմունք դէպի Միքայէլը և համակրութիւն դէպի Հեղինէն. այն ժամանակ դուք էլ միք պահանջիք հասարակական դատաստան Միքայէլի և Հեղինէի մէջ։ Հասարակութիւնը

իւր համակրութիւնը և հակակրութիւնը որոշում է նայած թէ սէրը ինչով է պայմանաւորուած. Այնտեղ ուր մոտիւ չը կայ, չի կարող լինել և բարոյախօսութիւն, չի կարող լինել հասարակաց դատաստան, և կրիտիկայի վիճաբանութիւնն էլ դառնում է աւելորդ։ Ես տեսնում եմ մոտիւ երբ Հեղինէն չի ուզում բաժանել իւր մարդուց. այդ մոտիւը շատ պարզ է՝ հայ կնոջ աւանդական դաստիարակութիւնը, հասարակաց կարծիքը և այլն կարող էին մեծ ոյժով ազդել Հեղինէի վերայ և թելադրել նրան՝ մնալ մարդու տանը ինչ էլ որ լինի։ Ահա ձեզ մի մոտիւ չը բաժանելու։ Բայց Հեղինէն սիրում է Միքայէլին, սիրում է նորան սկզբում, երբ դեռ լաւ չէր ճանաչում իւր մարդուն, նոր պսակուած ժամանակ. սիրում էր նորան սորա փչացածութիւնը տեսնելուց յետոյ, սիրում է նորան նաև այն ժամանակ երբ աներկբայելի էր մարդու ատելութիւնը, սիրում էր նորան՝ նաև բաժանուելուց յետոյ։ Պէտք է ենթադրել ուրեմն որ Միքայէլը իւր որ և է բարձր յատկութեան պատճառով մագնիսական ոյժ էր բանեցնում Հեղինէի վերայ։ Ընդհակառակը՝ Միքայէլը դուրս է բերուած որպէս կատարեալ ոչնչութիւն։ Եւ այն էլ այնպիսի մի ոչնչութիւն, որը այս խօսքից դուրս, թէ իրան փող է հարկաւոր, ուրեմն դեռ պէտք է խարբ կնոջ—ուրիշ էլ ոչինչ չունի ասելու։

Պր. Շիրանզադէի «Իշխանուհու» իբրև դրականական մի գործի ամենահիմնական պակասութիւնը ես դրա մէջն եմ տեսնում. Նոյն իսկ եթէ «Իշխանուհին» աւելի բեմական արժանաւորութիւններ ունենար (որոնցից նա դրականապէս զուրկ է), այնու ամենայնիւ նա կը ներկայացնէր մի հոգեբանական թիւրիմացութիւն։

ՑՆՏ ԳՐՈՒԹԵԱՆ։ Յօդուածս վաղուց գրուած էր, երբ այժմ կարդում եմ պ. Շիրանզադէի մի դրուածքը «Արձագանք»-ում (№ 52) խորագրած՝ Ի մ կրիտիկոսներին։ Դրուածքի առաջին տողերից ես այս տպաւորութիւնը ստացայ թէ «Իշխանուհու» հեղինակը ամենևին տրամադիր չէ որ և է աննպաստ կարծիք իւր պիեսի մասին ընդունել որպէս անաչառ քննադատութեան գործ։ «Ես գիտէի, ասում է նա, որ մեր մէջ չը կայ անկողմնապահ քննադատութիւն, քանի որ նախանձի և փոխադարձ ատելութեան ղգացմունքը մեր մամուլի ծառայողների մէջ հասել է ծայրահեղութեան»։

Եթէ այդ կարծիքը մեր մամուլի ամբողջութեան մասին այսպէս պէտք է հասկանալ, թէ իբր պ. Շիրանզադէն լաւ բան էլ գրելու լինի՝ ամենքը պէտք է աշխատեն նորան պախարակել ոտնակոխ անել,—դա կը լինի մի սխալ, որից ես նախազգուշացնում եմ երիտասարդ հեղինակին, թէ յատկապէս նորա և թէ ընդհանրապէս մեր գրականութեան օգտի համար։

Պարոն Շիրանզադէն իւր այդ դրուածքում պնդում է թէ Հեղինէն

չէր սիրում իշխան Միքայէլին։ Եթէ դա ճիշդ լինէր, յօդուածիս մէջ արած նկատողութիւնները արժէք չը պիտի ունենան։ Բայց հեղինակը միակ դատաւորը չէ իւր գրուածքի. ես պնդում եմ որ պիեսի մէջ Հեղինէն այնպէս է դուրս բերուած, ինչպէս ես եմ հասկացել։ Իսկ եթէ թիւրիմացութիւն կայ այստեղ, հեղինակը ինքն է մեղաւոր, քանի որ նա ոչ մի տեղ չի նշանակում թէ Հեղինէն չի սիրում Միքայէլին։

Բայց ենթադրենք մի րոպէ թէ Հեղինէն ոչ թէ սիրում է Միքայէլին, այլ միայն «ցաւում է իւր կորցրած ցնորքի մասին, վշտանում է իւր երևակայած և վերջը խորտակուած երջանկութեան մասին»։ Արդ, եթէ մէջ տեղ սէր չը կայ, և Հեղինէի ցնորքը ընտանեկան խաղաղ կեանքն է, իսկ միւս կողմից քանի որ Հեղինէն շատ լաւ գիտէ, որ Բէգմուրեանների ամբողջ ընտանիքը պահպանւում է միայն և միմիայն իւր օժիտով, և որ այդ օժիտը վերջանալուց յետոյ իրանց միայն թշուառութիւն և սնանկութիւն է սպասում, այդ նոյն Հեղինէն մթթէ այդքան թեթև սրտով Միքայէլին կը տար իւր ունեցած չունեցածը մինչ ամենավերջին րոպէն, չը մտածելով նոյն իսկ իւր սիրած երեխայի ապագայի մասին? Գոնէ այդ հանգամանքը փոթորիկներ չէր յարուցանիլ իրար չը սիրող ամուսինների մէջ, մանաւանդ որ Հեղինէն սկզբում չէր էլ թոյլ տալիս մարդուց բաժանուելու հնարաւորութիւնն անգամ։ Գործնական կնանքին անսովոր որ կինը իւր չը սիրած մարդուն կը զոհի բոլոր ունեցածը անտրտունջ կերպով իւր և իւր սիրած երեխային թշուառութեան մէջ տեսնելու մօտաւոր պերսպեկտիւով... Դա ինչ հոգեբանութիւն է և ինչ իրականութիւն։

ԼՈՒՍԻՆԻ